УДК 615.015

Հոմեոպաթային դեղերի պահանջարկի ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում

Ա.Ե. Սահակյան, Ա.Գ. Մայիլյան

ՀՀ ԱՆ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալություն, Մ. Հերացու անվան ԵրՊԲՀ-ի դեղերի տեխնոլոգիայի և դեղարարության կազմակերպման ամբիոն

375001, Երևան, Մոսկովյան 15

Բանալի բառեր. հոմեոպաթային դեղեր, պահանջարկ, սպառողի վարքի առանձնահատկություններ, միաբաղադրատարր դեղեր, գովազդ

19-րդ դարի վերջերին առողջապահության բնագավառում համաշխարհային պրակտիկան բնական հումքով դեղապատրաստուկների սպառման ծավալների ու տեսականու բուռն աճ գրանցեց [7]: Բնական հումքով դեղապատրաստուկները կիրառվում են նաև կյանքին սպառնացող այնպիսի հիվանդությունների բուժման մեջ, ինչպիսին մալարիան ու ՁԻԱՀ-ն են [6]:

Մեր երկրում նախապատրաստվել և իրականացվել են մի շարք կազմակերպչա-մեթոդական աշխատանքներ, որոնք իրենց էական ազդեցությունն են թողել հայրենական այլընտրանքային բժշկության կայացման և զարգացման գործընթացի վրա: Առավել էականը դրանցից ժողովրդական և այլընտրանքային բժշկության մեթոդների ընդգրկումն է բուժական մասնագիտությունների անվանացանկի մեջ, դրանց պաշտոնական ճանաչումը և ներդրումը գործնական առողջապահության մեջ: Այս մեթոդներից Հայաստանում տարածում են գտել իրիդոդիագնոստիկան, արոմաթերապիան, այուրվեդան, ռեֆլեքսաթերապիան (սկսած 1977 թ-ից), սուջոկ թերապիան (սկսած 1999 թ-ից), ինչպես նաև հոմեոպաթիան (սկսած 1993 թ-ից): Ավանդական և այլընտրանքային մեթոդների գերակշռող մասը բերվեցին Հայաստան մարդասիրական օգնության շրջանակներում Հայաստանի համար ծանրագույն ճգնաժամային տարիներին:

Այլընտրանքային բժշկության ճյուղերից հոմեոպաթիան ընդգրկված է շատ երկրների ազգային առողջապահության համակարգի մեջ [3,8]: Միացյալ Նահանգներում և Եվրոպայում վերջին 20 տարիներին հոմեոպաթային դեղերի վաճառքը աճել է տարեկան 20-30 %-ով [5]:Դժվար է գտնել բժշկության ծագման ու զարգացման պատմության մեջ մի մեթոդ, որի կայացումը այնքան բարդ ու հակասական լիներ, որքան հոմեոպաթային մեթոդինը: Արդեն ավելի քան 200 տարի է, որ ամբողջ աշխարհում չեն դադարում Սամուել Հանեմանի կողմից 1796 թվականին հիմնավորված մեթոդի վերաբերյալ բանավեճերը և ալոպաթային բժշկությունը հանդես է գալիս որպես հոմեոպաթիայի անուններում հակառակորդը [4]: Այդ հակամարտության մեջ բացառություն չկազմեց նաև Հայաստանը մինչև 2001 թվականի նոյեմբեր ամիսը, երբ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հրամանով հոմեոպաթիան ավելացվեց բժշկական մասնագիտությունների ցանկում [1]: Այսպիսով, բուժման հոմեոպաթային մեթոդի կիրառությունն օրինականորեն ճանաչվեց և պաշտոնապես ընդգրկվեց Հայաստանի առողջապահության համակարգում, իսկ հոմեոպաթային դեղերը սկսեցին հանրապետությունում պետականորեն գրանցվել և կիրառման թույլտվություն ստանալ:

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հոմեոպաթային դեղերի պահանջարկի ձևավորման վրա ազդող գործոնները, պարզել՝ թե բնակչության որ շերտերն են հանդիսանում հոմեոպաթային դեղեր օգտագործողները, հիմնականում ինչ նպատակներով են օգտագործվում հոմեոպաթային դեղերը, ինչով են առաջնորդվում հիվանդները այս կամ այն դեղն ընտրելիս և այլն:

Նյութը և մեթոդները

Տվյալները հավաքվել են գրավոր հարցման ճանապարհով՝ բնակչության, դեղատներում աշխատող դեղագետների և բժիշկների համար մեր կողմից մշակված առանձին հարցաթերթիկների օգնությամբ: Հարցման են ենթարկվել Երևան քաղաքի տարբեր շրջանների 70 դեղատների պատասխանատու դեղագետներ, 60 հոմեոպաթ-բժիշկներ և 132 քաղաքացիներ: Հետազոտվողները ընտրվել են պատահական նմուշահանման մեթոդով: Հետազոտություններն անցկացվել են 2003 թ. գարնան, ամռան ամիսներին:

Արդյունքներն ու քննարկումը

Դեղատներում կատարված հարցումներից պարզ-

գրել է, որ դրանց ճնշող մեծամասնության աշխատակիցները ծանոթ են հոմեոպաթային դեղերին և դեղատների զգալի մասի ապրանքային անվանացանկում առկա են հոմեոպաթային դեղեր, չնայած այդ դեղերի նկատմամբ պահանջարկը բարձր չէ և դրանց քանակն ու տեսակարար կշիռը դեղերի անվանացանկում զգալիորեն ցածր են (աղ. 1):

Աղյուսակ 1

Հարցերը	Պատասխաններ	
	Այո	Ոչ
Տեղեկատվություն ունե՞ք հոմեոպաթային դեղերի մասին	94%	6%
Ունե՞ք դեղատան անվանացանկում հոմեոպաթային դեղեր	78%	22 %
Զգու՞մ եք Ձեր աշխատանքում հոմեոպաթ բժշկի խորհրդատվության կարիք	46%	54 %
Կուզենայի՞ք Ձեր դեղատանը մշտապես առկա լինեն հոմեոպաթային դեղեր	78%	22%
	բարձր	ցածր
Հոմեոպաթային դեղերի նկատմամբ պահանջարկը	22%	78%
	բարձր	մատչելի
Ձեր կարծիքը հոմեոպաթային դեղերի գների մասին	68%	32%
	մինչև 5%	5% և ավելի
Հոմեոպաթային դեղերի շրջանառության տեսակարար կշիռը Ձեր դեղատան ապրանքաշրջանառության մեջ	82%	18 %

Հետաքրքրական է, որ մի կողմից դեղատան աշխատակիցները հոմեոպաթային դեղերի պահանջարկը գնահատել են ցածր, մյուս կողմից նրանց մեծամասնությունը ցանկություն են հայտնել իրենց դեղատներում ունենալ հոմեոպաթային դեղեր: Դա կարելի է բացատրել ընդհանրապես դեղագետների կողմից նոր դեղերի ու մեթոդների նկատմամբ բարձր հետաքրքրությամբ:

Ուշադրության է արժանի նաև այն, որ հարցվող դեղագետների կեսից ավելին հոմեոպաթային դեղերի գները բարձր են համարել: Բացի այդ, նրանց մեծամասնությունը իրենց աշխատանքում հոմեոպաթ-բժշկի խորհրդատվության կարիք չեն զգացել: Պատճառը ճշտելու համար մեր կողմից ուսումնասիրվել է ՀՀ դեղերի պետական գրանցամատյանը: Պարզվել է, որ հանրապետությունում կիրառման թույլտվություն ունեն միայն 61 հոմեոպաթային դեղեր, որոնք բոլորն էլ բազմաբաղադրատարր են (աղ. 2): Այլ կերպ, հանրապետության դեղագործական շուկայում բացակայում են միաբաղադրատարր դեղերը, որոնց գները միջազգային շուկայում զգալիորեն ցածր են, առավել ևս, որ դրանք հաճախ պատրաստվում են նաև դեղատնային պայմաններում:

Աղյուսակ 2

Հոմեոպաթային դեղերի գրանցման ժամկետները	Անվանումների թիվը
1999 – 2004	33
2000 – 2005	22
2002 – 2007	6

Հանրապետությունում բացակայում են հոմեոպաթային մասնագիտացված դեղատներ ևս: Բացի այդ, բազմաբաղադրատարր դեղերը, ըստ էության, առանց դեղատոմսի բացթողնվող դեղեր են և կարող են հիվանդի համար ընտրվել ինչպես բոլոր բժիշկների, այնպես էլ դեղագետների ու դեղագործների կողմից, ինչն էլ նվազեցնում է մասնագիտացված խորհրդատվության կարիքը դեղատներում: Տարիների ընթացքում գրանցվող դեղերի թվի նվազման պատճառներից մեկը կարելի է համարել նույնպես այն հանգամանքը, որ Հայաստանի հոմեոպաթ-բժիշկները հիմնականում դասական հոմեոպաթիայի հետևորդներ են և գործնականում չեն կիրառում բազմաբաղադրատարր դեղեր:

Մասնագիտական որակավորում ստացած բժիշկների շրջանում կատարված հարցման արդյունքները ցույց են տվել, որ բժիշկների մեծամասնությունը կարևորում են բուժման հոմեոպաթային մեթոդը, որպես արդյունավետ ու համեմատաբար անվտանգ մեթոդ (աղ. 3): Հոմեոպաթ բժիշկները հիմնականում աշխատում են միաբաղադրատարր դեղերով, մինչդեռ հանրապետության դեղագործական շուկայում դրանք իսպառ բացակայում են:

Հոմեոպաթային դեղերով ապահովման ներկայիս մակարդակի մասին բժիշկների դրական պատասխանի ոչ ցածր տոկոսի պատճառն այն է, որ միաբաղադրատարր դեղերի պահանջը ներկայումս բավարարվում է նվիրատվության ճանապարհով ստացված դեղերով: Բժիշկների կարծիքով բնակչությունը բավականաչափ տեղեկատվություն չունի

Աղյուսակ 3

Հարցեր և պատասխաններ	Արդյունք, %
Ձեր կարծիքը հոմեոպաթային դեղերի արդյունավետության և անվտանգության վերաբերյալ – բարձր – միջին	 85 15
Ինչպիսի հոմեոպաթային դեղերով եք աշխատում – միաբաղադրատարր – բազմաբաղադրատարր	 92,5 7,5
Բավարարում է հոմեոպաթային դեղերով մատակարարման ներկայիս մակարդակը պահանջարկին – այո – ոչ	 42,5 57,5
Ձեր կարծիքով բնակչությունը բավականաչափ տեղեկետվություն ունի բուժման հոմեոպաթային մեթոդի վերաբերյալ – այո – ոչ	5% 95
Կուզենայիք, որ հոմեոպաթային դեղերի բաց թողումը կատարվեր մասնագիտացված դեղատներից հոմեոպաթ-բժշկի դեղատոմսերով – այո – ոչ	 77,5 22,5

բուժման հոմեոպաթային մեթոդի վերաբերյալ: Դրանով ևս կարելի է բացատրել այդ դեղերի նկատմամբ պահանջարկի ցածր մակարդակը: Նրանք ընդգծում են հոմեոպաթային դեղերը մասնագիտացված դեղատներից բժշկի դեղատոմսերով բաց թողնելու անհրաժեշտությունը: Դրանով կբարձրանա բուժման կառավարելիությունն ու արդյունավետությունը:

Դեղատների հաճախորդների շրջանում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ հոմեոպաթային դեղ օգտագործողների մեծամասնությունը կանայք են և ավելի հաճախ երիտասարդ (26-45 տարեկան) տարիքի: Տղամարդկանց մեծամասնությունը 46-60 տարեկան են (աղ. 4):

Աղյուսակ 4

Հարցվողների տարիքային խմբերը, %					
Սեռը	18-25 տարեկան	26-35 տարեկան	36-45 տարեկան	46-60 տարեկան	60-ից բարձր
Տղամարդ	20	22	20	38	0
Կին	10	30,5	22,5	20	17

Ինչ վերաբերվում է սոցիալական կարգավիճակին, ապա հարցվողների մեծամասնությունը կազմել են ծառայողները: Նրանց ճնշող մեծամասնությունը բարձրագույն կրթություն ունեցող անձիք են (աղ. 5):

Աղյուսակ 5

Հարցվողների կրթությունը և սոցիալական վիճակը, %						
Սեռը	միջնակարգ և միջին մասնագիտական	բարձրագույն կրթություն	բանվոր	ծառայող	թոշակառու	սովորող
Տղամարդ	25	75	18	47	12	23
Կին	21,5	68,5	12,5	58	14,5	15

Հարցվողների մեծամասնության ամսեկան միջին եկամուտը մեկ անձին կազմել է 6 000– 20 000 դրամ, ընդ որում, կանանց եկամուտների մակարդակը զգալիորեն ցածր է (աղ. 6):

Աղյուսակ 6

Մեկ անձի ամսեկան միջին եկամուտը (դրամ)			
Սեռը	մինչև 5 000, %	6 000 – 20 000, %	20 000 և ավելի, %
Տղամարդ	22	60	18
Կին	35	45	20

Տղամարդկանց մեծամասնությունը նախընտրում է բուժվել ավելի արդյունավետ, թեկուզև համեմատաբար թանկ դեղով, մինչդեռ, կանայք ավելի բծախնդիր են դեղի գնի նկատմամբ (աղ. 7):

Աղյուսակ 7

Կարող եք առաջնությունը տալ ավելի թանկ , բայց և ավելի արդյունավետ դեղի		
Սեռը	այո, %	ոչ, %
Տղամարդ	60	40
Կին	47,5	52,5

Ստացված տվյալների (աղ. 4–7) վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ հոմեոպաթային մեթոդով բուժվողները հիմնականում կրթված մտավորականներ են 26–60 տարիքային սահմանում:

Դա հասկանալի է, քանի որ բուժման նոր մեթոդ ընտրելիս պետք է որոշ չափով իրազեկ լինել, թե ինչով է տվյալ մեթոդը տարբերվում մյուսներից, ուսումնասիրել տեղեկատու գրականություն, խորհրդակցել մասնագետի հետ, նկատի ունենալ, որ այն պահանջում է երկարատև բուժման համար համբերություն (երբեմն մի քանի տարի) և բժշկի հսկողություն: Բուժման հոմեոպաթային մեթոդից ավելի շատ կանայք են օգտվում, քանի որ ավելի համբերատար են և ընտրում են երկարատև, բայց և էժան ու արդյունավետ բուժման եղանակ: Տղամարդիկ ավելի հակված են առաջնություն տալու թանկ ու արդյունավետ դեղի: Սա կարելի է բացատրել այն բանով, որ կանայք բնույթով ավելի տնտեսող են, իսկ տղամարդիկ ավելի բծախնդիր իրենց առողջության հանդեպ:

Հոմեոպաթային դեղերի նկատմամբ պահանջարկի ձևավորումը կախված է ոչ միայն բնակչության եկամուտների մակարդակից և դեղաքաղաքական իրավիճակից, այլ սպառողների ու դեղատան աշխատակիցների հոմեոպաթային դեղերի արդյունավետության և հոմեոպաթային մեթոդի առանձնահատկությունների ու հնարավորությունների մասին տեղեկացվածության աստիճանից, որին էլ նվիրված է մեր ուսումնասիրությունների մյուս մասը (աղ. 8):

Աղյուսակ 8

Ու՞մ խորհրդով եք օգտվում բուժման հոմեոպաթային մեթոդից				
Սեռը	հարազատներ, ընկերներ, %	դեղատան աշխատակիցներ, %	բժիշկներ, %	գովազդ, %
Տղամարդ	40	0	60	0
Կին	47,5	0	52,5	0

Եվ կանայք, և տղամարդիկ հիմնականում օգտվում են հարազատների, ընկերների և բժիշկների խորհուրդներից, ընդ որում, տեղեկատվության ամենահեղինակավոր աղբյուր հանդիսանում են բժիշկները:

Տեղեկատվական երկու կարևոր աղբյուրներ՝ դեղատան աշխատակիցները և գովազդը, բացակայել են: Բերված տվյալները ցույց են տալիս, որ դեղատան աշխատակիցները բավարար լուսաբանված չեն այս համեմատաբար նոր մեթոդի մասին, այլապես դեղատունը կարող է մեծ դեր խաղալ մեթոդի տարածման և դեղերի պահանջարկի ձևավորման գործընթացում: Նմանատիպ հարցումները՝ կատարված Ռուսաստանի Դաշնությունում, ցույց են տվել, որ հիվանդների համար ավելի կարևոր են դեղատան աշխատակիցների խորհուրդները, քան գովազդը և բժիշկների խորհուրդը [2]: Պատճառը, ըստ երևույթին, այն է, որ Ռուսաստանի Դաշնության մի շարք քաղաքներում դեռևս խորհրդային տարիներից գործում էին հոմեոպաթային դեղատներ, այսինքն, Ռուսաստանում հոմեոպաթային դեղերի կիրառման մշակված ավանդույթ կա: Հայաստանում մեթոդի կիրառությունը ընդամենը 10-նամյա փորձ ունի: Այստեղ դեղատները ունեն շատ նեղ տեսականի, այն էլ միայն բազմաբաղադրատարր դեղեր: Մինչդեռ, հիվանդները այս մեթոդով հիմնականում բուժվում են նվիրատվության ճանապարհով ստացված միաբաղադրատարր դեղերով:

Հայտնի է, որ հոմեոպաթային դեղերը կարող են օգտագործվել կանխարգելման, մենաբուժման և ալոպաթային դեղերի հետ զուգորդված բուժման նպատակներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը բուժվում են միայն հոմեոպաթային միջոցներով, իսկ ավելի փոքրաթիվ մասը ընդունում է զուգորդված բուժում (աղ. 9):

Աղյուսակ 9

Ի՞նչ նպատակով եք օգտագործում հոմեոպաթային դեղերը			
Սեռը	կանխարգելում, %	մենաբուժում, %	զուգակցված բուժում, %
Տղամարդ	0	90	10
Կին	10	77,5	12,5

Դեղերի պահանջարկի ձևավորման վրա դեղագործական շուկայում էապես ազդում են սպառողի վարքի առանձնահատկությունները: Ուստի, մենք փորձել ենք ճշտել գերակայություն ունեցող այն գործոնները, որոնք առավել ազդում են քաղաքացիների կողմից հոմեոպաթային դեղերի ընտրության վրա: Դեղատան աշխատակիցների կարծիքով, առավել կարևոր գործոն է հանդիսանում գինը: Սակայն հարցման արդյունքները ցույց են տվել, որ տվյալ պարագայում մասնագետները սխալվել են: Եվ կանայք, և տղամարդիկ առաջնային են համարում հոմեոպաթային դեղերի ընտրության հարցում արդյունավետությունը, այնուհետև բժշկի նշանակումը և անվտանգությունը: Հետաքրքիր է, որ դեղերի գինը էական դեր չի խաղում (աղ. 10): Դա բացատրվում է այն հանգամանքով, որ դեղատներում հոմեոպաթային դեղերի ընտրության լայն հնարավորություն չկա, այսինքն, դրանց պահանջարկը քիչ ճկուն է: Բացի այդ, համեմատաբար ցածր գին ունեցող միաբաղադրատարր դեղերը նշանակվում և տրվում են բժշկի կողմից, հիվանդները դրանք չեն գնում, որպեսզի համեմատեն այլ դեղերի հետ:

Աղյուսակ 10

Հոմեոպաթային դեղի ընտրության ժամանակ ո՞րն է ներքոհիշյալ գործոններից առաջնայինը Ձեզ համար					
Սեռը	գինը, %	արդյունավետությունը, %	բժշկի նշանակումը, %	անվտանգությունը, %	դժվարանում է պատասխանել, %
Տղամարդ	0	50	20	20	10
Կին	5	40	35	20	0

Մեր ուսումնասիրությունների ընթացքում ցանկացել ենք պարզել նաև, թե հիվանդները ինչպիսի արդյունք են ստացել հոմեոպաթային դեղերով բուժման արդյունքում: Հարցման տվյալները ցույց են տվել, որ կանանց 20 և տղամարդկանց 5%-ը իրենց համարել են ապաքինված: Հարցվողների գերակշռող մեծամասնության մոտ նկատվել է զգալի բարելավում: Բոլոր տղամարդկանց մոտ բուժումը այս կամ այն արդյունք է տվել, կանանց չնչին մասի մոտ ընդհանրապես արդյունք չի արձանագրվել (աղ.11): Իհարկե, այս տվյալները խիստ սուբյեկտիվ են և օբյեկտիվ եզրահանգումների համար անհրաժեշտ են լուրջ կլինիկական հետազոտություններ:

Արդյունքները գնահատելիս նկատի պետք է ունենալ նաև դեղի «պլացեբո» ազդեցությունը, որը հնարավոր է բացահայտել միայն կրկնակի կույր հետազոտությունների միջոցով:

Աղյուսակ 11

Բուժման արդյունավետությունը	Տղամարդ, %	Կին, %
Հիվանդությունը բուժվել է ամբողջությամբ	5	25
Արդյունք եղել է, բայց հիվանդությունը ամբողջությամբ չի բուժվել	35	25
Հիվանդությունը խրոնիկական է, բայց ինքնազգացողությունը ավելի լավ ու բարդություններից զերծ	30	20
Նկատվել է ընդհանուր վիճակի բարելավում	30	27,5
Արդյունք չկա	0	2,5

Շուկայավարության տեսանկյունից փորձել ենք պարզել նաև, թե սպառողները որտեղ կցանկանային ձեռք բերել հոմեոպաթային դեղերը: Հարցվողների հիմնական մասի համար ավելի նախընտրելի է հոմեոպաթային դեղը գնել մասնագիտացված հոմեոպաթային դեղատնից կամ դեղատների մասնագիտացված բաժիններից (աղ.12):

Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, հասունացել է հոմեոպաթային մասնագիտացված դեղատների և դեղատնային բաժինների կազմակերպման խնդիրը:

Աղյուսակ 12

Որտե՞ղ եք նախընտրում գնել հոմեոպաթային դեղը				
Սեռը	մասնագիտացված հոմեոպաթային դեղատնից, %	ընդհանուր դեղատնից, %	դեղատան մասնագիտացված բաժնից, %	միևնույնն է, %
Տղամարդ	65	0	25	10
Կին	75	0	20	5

Հանրապետությունում առհասարակ զարգացած չէ նաև հոմեոպաթային դեղագործությունը, որը որոշակի ներդրում կարող է կատարել բնակչության դեղապահովման պետական քաղաքականության իրականացման մեջ՝ ուղղված անվտանգ, արդյունավետ, որակյալ դեղերի բավարար տեսականիով ու ծավալով, մատչելի գներով մատակարարմանը:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ.

ա/ հանրապետության դեղագործական շուկան լաղքատ է հոմեոպաթային դեղերով, իսպառ բացակայում են միաբաղադրատարր հոմեոպաթային դեղերը, այն դեպքում, երբ հանրապետության հոմեոպաթ-բժիշկները բուժումները իրականացնում են գերազանցապես միաբաղադրատարր դեղերով,

բ/ հանրապետությունում զարգացած չէ հոմեոպաթային դեղագործությունը, չեն գործում մասնագիտացված հոմեոպաթային դեղատներ, իսկ հանրային դեղատներում մասնագիտացված բաժիններ,

գ/ հանրապետությունում չկան մասնագիտացված դեղագործական կադրեր,

դ/ չնայած համարյա բոլոր հարցվողները նշում են բուժման բավարար արդյունավետության մասին, այնուամենայնիվ մեթոդը անհրաժեշտ կիրառություն չի գտել, բնակչությունը բավականաչափ տեղեկացված չէ այս հարցում, ինչն էլ զգալիորեն ազդում է այդ դեղերի պահանջարկի ձևավորման վրա,

ե/ հանրապետությունում վատ է կազմակերպված բուժման հոմեոպաթային մեթոդի և հոմեոպաթային դեղերի գովազդը:

Ուսումնասիրության արդյունքներից ելնելով առաջարկվում է.

1. Կատարելագործել օրենսդրական և նորմատիվային դաշտը հոմեոպաթիայի՝ որպես բժշկության այլընտրանքային ճյուղերից մեկի, և հոմեոպաթային դեղագործության զարգացման համար:
2. Նպաստել հոմեոպաթային, հատկապես, միաբաղադրատարր դեղերով դեղագործական շուկան ապահովելուն:
3. Ստեղծել նորմատիվային դաշտ հոմեոպաթային մասնագիտական դեղատների կազմակերպման համար:
4. Հագեցնել դեղագետների ուսումնական ծրագրերը հոմեոպաթային դեղագործությանը նվիրված հարցերով:
5. Հնարավորություններ ստեղծել դեղագետներից հոմեոպաթ-դեղագետների վերապատրաստման համար:
6. Կազմակերպել բուժման հոմեոպաթային մեթոդի և դեղերի մասին տեղեկատվության տարածումն ու գովազդը:
7. Շարունակել հոմեոպաթային դեղերի ռեալ պահանջարկի որոշման մարկեթինգային ուսումնա-

Поступила 10.11.04

Формирование спроса на гомеопатические лекарства в Республике Армения

А. Е. Саакян, А. Г. Маилян

Были изучены факторы, влияющие на формирование спроса на гомеопатические лекарства, и особенности поведения потребителя на фармацевтическом рынке Армении. Выявлено, что фармацевтический рынок республики мало насыщен гомеопатическими лекарствами, совершенно отсутствуют монокомпонентные гомеопатические препараты, тогда как врачи - гомеопаты республики назначают в основном монопрепараты, которые до сих пор поступают в республику в виде гуманитарной помощи. В республике не развита гомеопатическая фармация, не действуют специализированные гомеопатические аптеки, а в аптеках общего профиля–специализированные отделы, нет специализированных фармацевтических кадров. Реклама гомеопатического метода лечения и гомеопатических лекарств не организована на надлежащем уровне. Несмотря на то, что почти все опрашиваемые отмечают удовлетворительную эффективность лечения, все же метод не нашел надлежащего применения, население недостаточно информировано, что значительно влияет на формирование спроса на эти лекарства.

Formation of the homeopathic preparations' demand in the Republic of Armenia

A. E. Sahakyan, A.G. Mayilyan

The factors influencing the homeopathic preparations' demand formation and the peculiarities of customers' behavior in the pharmaceutical market in Armenia have been studied. It has been revealed that the pharmaceutical market in Armenia is poor in the homeopathic preparations, and the mono-compartment homeopathic preparations are not available, meanwhile the homeopath doctors provide their treatment mainly by the mentioned preparations, which up to now are supported by means of donations. The homeopathic pharmacy is not developed in Armenia, the specialized homeopathic drugstores, as well as specialized departments in general drugstores are a sent, a specialized pharmaceutical staff is not availab either .

The homeopathic treatment methods and homeopath preparations' advertising is not organized properly. A though all the asked people testify to the sufficient effe tiveness of the treatment, the method has not found rel vant utilization, the population is not informed enoug which influences the mentioned preparations' need form tion in Armenia.

Գրականություն

1. ՀՀ առողջապահության նախարարության 28.11.2001 թվականի N 869 հրաման
2. *Грушинская М.* Потребительское поведение на рынке гомеопатических средств. Российские аптеки. 2001, 2 (16), с. 20.
3. *Губин Ю.И., Александров А.Н., Маслова Н.Ф., Дихтярев С.И.* Рациональные требования к гомеопатическим препаратам и лекарственным средствам на основе природных компонентов. Провизор. 2001, вып. 16, с.12.
4. *Киселева Т.Л., Карпеев А.А., Покровская Т.Е., Катковская М.Г.* Отечественная гомеопатия: История в документах. Фармация. 2002, 2, с. 43.
5. *Мустафаев Н.С.* Международное возрождение гомеопатии. Вестник биофизической медицины 1992, 1, с. 4.
6. Народная медицина. Пятьдесят шестая сесси Всемирной Ассамблеи здравоохранения. Докла секретариата, 31 марта 2003г.
7. Стратегия ВОЗ в области народной медицины 2002-2005г. Всемирная организация здравоохранения Женева, 2002, 62с.
8. Юридический статус народной медицины и комплементарной /альтернативной медицины: Обзор положения в мире. Всемирная организация здравоохранения, Женева, 2001, 181с.
9. http://www.bionorika.de/worldwide/body/sinupret.htm 16.02.2000